

29.12.2003թ.

ժ. 11.⁰⁰

Մասնակցում էին՝

Ս. Մնացականյան (*Խորհրդի նախագահ*), Գ. Անանյան, Յու. Պողոսյան, Հ. Պետրոսյան, Վ. Դանիելյան, Վ. Դավթյան (*Խորհրդի անդամներ*), Ա. Աղազարյան (*Խորհրդի քարտուղար*)

Հրավիրված էին՝ Լ. Միրզոյան (*ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ*), Ա. Հայրապետյան (*ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար*), Ջ. Միրզոյան (*ՀՀ ԱՎԾ նախագահի խորհրդական*), Գ. Գյուրջյան (*Վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ*), Վ. Սարոյան (*Իրավաբանական բաժնի պետ*),

Օրակարգի նախագծում՝ երկու հարց.

1. Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության հարցաթերթը և օրագիրը հաստատելու մասին:

/Ձեկուցող՝ Հ. Պետրոսյան/

2. Գույք հանձնելու մասին.

/Ձեկուցող՝ Ա. Հայրապետյան/

3. ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից վարվող 12 խումբ տվյալների մեթոդական նկարագրությունները (մեթատվյալները) հաստատելու մասին.

/Ձեկուցող՝ Վ. Դանիելյան/

Նախագահի կողմից ներկայացվեց Խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

/Բվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

1. Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության հարցաթերթը և օրագիրը հաստատելու մասին:

/Ձեկուցող՝ Հ. Պետրոսյան/

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հաստատել Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության հարցաթերթը և օրագիրը:

/Անհատական/

/Բվեարկության արդյունքները - կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

2. Գույք հանձնելու մասին.

/Ձեկուցող՝ Ա. Հայրապետյան/

ՈՐՈՇԵՑԻՆ՝

2001 թ. Հայաստանի Հանրապետության Ազգային մարդահամարի շրջանակում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին ձեռքբերված 63421845 (վաթսուներեք միլիոն չորս հարյուր քսանմեկ հազար ութ հարյուր քառասունհինգ) դրամի չափով հիմնական միջոցները, փոքրաթեք, արագամաշ առարկաները և նյութերը «ՀՀ 2001թ. անցկացված մարդահամարի նյութերի մշակում, ամփոփում և հրապարակում» ծրագրից (01.07.05) հանձնել «Պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում» ծրագրին (01.07.01):

/Արձանագրային/

/Բվեարկության արդյունքները - կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

3. ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից վարվող 12 խումբ տվյալների մեթոդական նկարագրությունները (մեթատվյալները) հաստատելու մասին.

/Ձեկուցող՝ Վ. Դանիելյան/

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հաստատել Արժույթի Միջազգային Հիմնադրամի Տվյալների տարածման հատուկ ստանդարտի ձևաչափով Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից վարվող 12 խումբ տվյալների մեթոդական նկարագրությունները (մեթատվյալները):

Նախագահ

Ս. Մնացականյան

Քարտուղար

Ա. Ադազարյան